ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԱՇՁԲ-20/4-Պ

ք.Երևան

19 հոկտեմբերի 2020թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Սարգսյանի, ով գործում է Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 21.04.2020թ.-ի թիվ 16-Ա որոշման հիման վրա, մի կողմից, և

«Դավիթն Օծոփեցի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Շ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

ստորագրեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Կապալառուն Պատվիրատուի հանձնարարությամբ պարտավորվում է կատարել սույն Պայմանագրի 1.2. կետում նշված բնութագրին համապատասխան տոգորման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Տոգորման աշխատանքները կատարվելու են Պատվիրատուի տարածքում գտնվող շենք-շինությունների տանիքների փայտյա կառուցվածքների վրա՝ ընդհանուր առմամբ մոտ 4000 (չորս հազար) մ² (քառակուսի մետր) մակերեսով տարածքում: Աշխատանքների կատարումը ներառում է հրդեհապաշտպան նյութերով փայտից պատրաստված կառուցվածքների ներկում: Տոգորման համար նախատեսված նյութերը պետք է լինեն բարձր ծածկողականությամբ, նյութերը պետք է ծածկվեն 2 (երկու) շերտով, անհրաժեշտության դեպքում՝ 3 (երեք) շերտով: Յուրաքանչյուր շերտի աշխատանքների կատարման միջև ընդմիջումը պետք է լինի առնվազն 3 (երեք) ժամ: Աշխատանքները պետք է իրականացվեն փոշեներկման միջոցով: Աշխատանքների արդյունքում պետք է ապահովվի փայտյա կառուցվածքների առնվազն 3 (երեք) տարվա հրակայունությունը:

1.3. Կապալառուն երաշխավորում է, որ Աշխատանքները կատարվելու են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նորմերին և կանոններին, ինչպես նաև սույն Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան: Աշխատանքների ընթացքում օգտագործվելիք նյութերը պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ նյութերի բաղադրությանը, որակին ներկայացվող պահանջներին, նորմերին, ստանդարտներին:

1.4. Սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքները կատարվելու են սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 2020թ.-ի նոյեմբերի 30-ը: Աշխատանքները համարվում են պատշաճ կատարված Պատվիրատուի կողմից այն ընդունելուց հետո:

1.5. Կողմերը արձանագրում են, որ Պատվիրատուն իրավունք ունի կատարված Աշխատանքների արդյունքների որակի հետ կապված պահանջ ներկայացնել Աշխատանքները Պատվիրատուին հանձնելուց հետո 3 (երեք) տարվա ընթացքում (երաշխիքային ժամկետ):

1.6. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.1.1. Կապալառուից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարել Պայմանագրով սահմանված ժամկետում, ամբողջությամբ, պատշաճ որակով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի ստանդարտներին, նորմերին և կանոններին, սույն Պայմանագրով սահմանված բնութագրին համապատասխան,

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Աշխատանքների կատարման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.1.3. Պահանջել Կապալառուից աջակցել Պատվիրատուին Աշխատանքների կատարման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև Աշխատանքներն ընդունելիս,

2.1.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կապալառուին տալ Աշխատանքների կատարմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

2.1.5. Գրավոր ծանուցմամբ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

i. Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքները կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

ii. Աշխատանքների կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ դրանք պատշաճ չեն կատարվելու և առկա թերությունների վերացման համար Պատվիրատուի նշանակած ողջամիտ ժամկետում այդպիսի թերությունները Կապալառուի կողմից չեն վերացվում,

iii. Կապալառուն այլ կերպ թույլ է տալիս սույն Պայմանագրի էական խախտում:

2.1.6. Ցանկացած ժամանակ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հանձնել անավարտ Աշխատանքների արդյունքը՝ այդ մասին 8 (ութ) աշխատանքային օր առաջ ծանուցելով Կապալառուին, վճարելով մինչև Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու վերաբերյալ Պատվիրատուի համապատասխան ծանուցումը ստանալու պահը կատարած աշխատանքին համարժեք գումարը, ինչպես նաև հատուցելով Պայմանագրի դադարմամբ Կապալառուին պատճառված իրական վնասը՝ ոչ ավել քան ամբողջ աշխատանքի համար սահմանված և կատարված աշխատանքի համար վճարված մասի գների տարբերության չափով: Սույն կետով սահմանված փոխհատուցումը ստանալու դեպքում Կապալառուն զրկվում է հետագայում այլ վնասներ հատուցելու պահանջից,

2.1.7. Սույն Պայմանագրի 2.4.2. կետով սահմանված կարգով Կապալառուի ծանուցումը ստանալու դեպքում ողջամիտ ժամկետում Կապալառուին տալ համապատասխան ցուցումը: Սույն կետով սահմանված ժամկետի ընթացքում Կապալառուի՝ Աշխատանքների կատարման ժամկետի ընթացքը կասեցվում է,

2.1.8. Ցանկացած ձևով օգտագործել Աշխատանքների արդյունքը առանց Կապալառուի հետ համաձայնեցնելու,

2.1.9. Սույն Պայմանագրի 5-րդ գլխով նախատեսված դեպքերում Կապալառուից պահանջել ամբողջությամբ հատուցել Աշխատանքների կատարման կապակցությամբ Պատվիրատուին պատճառված վնասը՝ ներառյալ բաց թողնված օգուտը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով:

2.2. ***Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1. Կապալառուին ապահովել սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, տրամադրել ելակետային տվյալներ այն տարածքների վերաբերյալ, որոնց կապակցությամբ կատարվելու են սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքները, փաստաթղթեր, Կապալառուի ներկայացուցիչներին Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն և այլն,

2.2.2. Պայմանագրով նախատեսված կարգով ընդունել կատարված Աշխատանքները (դրանց արդյունքը), իսկ Պայմանագրից Աշխատանքների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքներում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին սույն Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով հայտնել Կապալառուին,

2.2.3. Աշխատանքների արդյունքն ընդունելու դեպքում սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարը:

2.3. ***Կապալառուն իրավունք ունի՝***

2.3.1. Սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքների կատարման նպատակով Պատվիրատուից պահանջել ապահովել սույն Պայմանագրի 2.2.1 կետով սահմանված պայմանները,

2.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ կատարված Աշխատանքները,

2.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել կատարված Աշխատանքների դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում,

2.3.4. Այն դեպքում, երբ Աշխատանքները կատարելն անհնար է դարձել Պատվիրատուի գործողությունների կամ վրիպումների հետևանքով՝ կատարված փաստացի աշխատանքների հաշվառմամբ ստանալ Պայմանագրի գնի համապատասխան մասը:

2.4. ***Կապալառուն պարտավոր է՝***

2.4.1. Աշխատանքները կատարել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Աշխատանքների կատարմանը Կապալառուի կողմից երրորդ անձանց ներգրավելը (ենթակապալառու) հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության հիման վրա,

2.4.2. Պատվիրատուին անհապաղ նախազգուշացնել և մինչ նրանից ցուցում ստանալը դադարեցնել Աշխատանքների կատարումը, եթե

i. Աշխատանքների կատարման եղանակների մասին Պատվիրատուի ցուցումները կատարելը կարող են Պատվիրատուի համար անբարենպաստ հետևանքներ առաջացնել,

ii. Հայտնաբերվել են Կապալառուից անկախ այնպիսի հանգամանքներ, որոնք սպառնում են կատարվող Աշխատանքների արդյունքի պիտանելիությանը և ամրությանը կամ անհնար են դարձնում դրանք ժամանակին ավարտելը,

2.4.3. Եթե Կապալառուն սույն Պայմանագրի 2.4.2 կետով սահմանված կարգով նախազգուշացումից հետո առանց Պատվիրատուի ցուցման ստացման շարունակում է կատարել Աշխատանքները, ապա զրկվում է հետագայում Պայմանագրի 2.4.2 կետով նշված հանգամանքները վկայակոչելու իրավունքից,

2.4.4. Պատասխանատվություն կրել Աշխատանքների կատարման ժամկետների խախտման համար՝ վճարելով սույն Պայմանագրի 5.2. կետով նախատեսված տույժը և հատուցելով կետանցով Պատվիրատուին պատճառված վնասները,

2.4.5. Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարել պատշաճ որակով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի ստանդարտներին, նորմերին, կանոններին, Պայմանագրով սահմանված բնութագրին համապատասխան,

2.4.6. Աջակցել Պատվիրատուին Աշխատանքների կատարման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև Աշխատանքներն ընդունելիս, սույն Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան պահանջը ստանալուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել Աշխատանքների կատարման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.4.7. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված ողջամիտ ցուցումներին,

2.4.8. Սույն Պայմանագրի 2.1.5. կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները,

2.4.9. Հանձնման-ընդունման ակտի ստորագրման հետ մեկտեղ Պատվիրատուին տեղեկացնել Աշխատանքների արդյունքի շահագործման պահանջների և կանոնների, այդ պահանջները և կանոնները չպահպանելու հետևանքների վերաբերյալ, եթե դա կիրառելի է ելնելով Աշխատանքների բնույթից,

2.4.10. Սույն Պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում իր հաշվի Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել կատարված Աշխատանքներում հայտնաբերված թերությունները: Նշված թերությունների նկատմամբ mutatis mutandis կիրառելի են սույն Պայմանագրի 3-րդ գլխով սահմանված նորմերը:

2.4.11. Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Աշխատանքների կատարման ավարտից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված նախնական հանձնման-ընդունման ակտը (նշելով փաստացի կատարված աշխատանքների ծավալը՝ մ^2):

3.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն ստուգում է կատարված Աշխատանքների որակը: Պատվիրատուի կողմից կատարված Աշխատանքների որակի ստուգման համար Պատվիրատուն իրավունք ունի ներգրավվել սույն Պայմանագրով կատարված Աշխատանքների ստուգման հարաբերությունների պրոֆեսիոնալ իրավասու մարմնի (այսուհետ՝ Իրավասու մարմին), որը անցկացնում է փորձաքննություն և եզրակացությունը տրամադրում է

Պատվիրատուին: Իրավասու մարմնի և Պատվիրատուի հարաբերությունները դուրս են սույն Պայմանագրի կարգավորման առարկայի շրջանակից:

3.3. Իրավասու մարմնի կողմից տրված եզրակացության հիման վրա Պատվիրատուն սույն Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում որոշում է Աշխատանքները ընդունելու հարցը:

3.4. Եթե կատարված Աշխատանքները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն ծանուցում է Կապալառուին հանձնման-ընդունման ակտ և հաշիվ-վավերագիր դուրս գրելու մասին, որը պարտավորվում է հաստատել ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման ակտը չի ստորագրվում, և

i. Կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով հայտնաբերված թերությունների վերացման համար անհրաժեշտ և Կապալառուի կողմից անհատույց կատարման ենթակա աշխատանքները և դրանց կատարման ողջամիտ ժամկետները.

ii. Պատվիրատուն Կապալառուի նկատմամբ կիրառում է սույն Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.5. Եթե Պայմանագրի 3.2. կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքների արդյունքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքները համարվում են ընդունված և Պայմանագրի 3.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը Կապալառուի Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

3.6. Եթե Պատվիրատուն Աշխատանքներն ընդունում է առանց սույն Պայմանագրի 3.2. կետով սահմանված ժամկետում դրանց արդյունքների ստուգման, ապա զրկվում է աշխատանքի այն թերությունները վկայակոչելու իրավունքից, որոնք կարող էին հայտնաբերվել Աշխատանքների արդյունքը սովորական եղանակով ընդունելու ժամանակ (բացահայտ թերություններ):

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրով Կապալառուի կողմից կատարման ենթակա Աշխատանքների 1 (մեկ) մ^2 (քառակուսի մետրի) արժեքը կազմում է 250 (երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Աշխատանքների գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում, բայց չսահամափակվելով՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, օգտագործվելիք նյութերի արժեքներ:

4.1.1. Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրի շրջանակներում կատարվելիք Աշխատանքների ընդհանուր արժեքը չի կարող գերազանցել 999 000 (ինը հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամը:

4.1.2. Կապալառուն պարտավորվում է սույն Պայմանագրի 4.1.1. կետով սահմանված գումարի չափով Աշխատանքները կատարելուց հետո տեղեկացնել Պատվիրատուին Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափի սպառման վերաբերյալ, սույն Պայմանագրի շրջանակներում չկատարել նոր Աշխատանքներ՝ մինչև հակառակի վերաբերյալ Կողմերի միջև գրավոր համաձայնության ձեռքբերումը:

4.2. Պատվիրատուն կատարված Աշխատանքների դիմաց վճարում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Սույն Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կապալառուի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

4.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

4.5. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կապալառուի բանկում՝ Կապալառուն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքների գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Սույն կետով նախատեսված տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Կապալառուին վճարման ենթակա գումարից: Սույն կետով սահմանված

պատասխանատվության միջոցները կիրառելի են նաև սույն Պայմանագրի 3.4 կետի i ենթակետով սահմանված դեպքում:

5.3. Կատարված Աշխատանքների դիմաց վճարելու սույն Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավելին, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.4. Տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

5.5. Կապալառուն պատասխանատու է սույն Պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում Աշխատանքների որակի կորստի հետևանքով Պատվիրատուին պատճառված վնասների համար:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրումից հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են ջրհեղեղը, հրդեհը, երկրաշարժը, փոթորիկը, սողանքը և բնական այլ աղետները, պայթյունը, արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքացիական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, համաճարակները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Կողմը, որի մոտ ծագել է ֆորսմաժորային իրավիճակ, պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում, սակայն ոչ ուշ, քան նման իրավիճակի վրա հասնելուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցի մյուս Կողմին նման իրավիճակի առաջացման, իսկ հետագայում նաև՝ բնականոն պայմանների վերականգնման մասին, հակառակ դեպքում կզրկվի ապագայում ֆորսմաժորային իրավիճակը որպես հիմնավորում օգտագործելու իրավունքից:

6.3. Ֆորսմաժորային իրավիճակի վերաբերյալ հանդիպակաց Կողմին ծանուցում ուղարկելու պահից Կողմի համապատասխան պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջը համարվում է կասեցված մինչև Պայմանագրի կատարման համար բնականոն պայմանների վերականգնումը:

6.4. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության, ինչպես նաև հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով, պատշաճ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նորմերին և կանոններին, ինչպես նաև սույն Պայմանագրով սահմանված բնութագրին, համապատասխան կատարումը:

8.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

8.3. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

8.4. Սույն Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց Կողմերի նախնական գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.5. Սույն Պայմանագրի պատշաճ (ներառյալ որակով) կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

8.6. Սույն Պայմանագրով սահմանված Կողմի իրավունքին համապատասխանում է մյուս Կողմի պարտականությունը՝ ապահովել տվյալ իրավունքի իրացումը:

8.7. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.8. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

8.9. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները կարգավորվում են Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ՝ կախված այդպիսի լուծման շարժառիթ հանդիսացած հանգամանքներից:

8.10. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.11. Սույն Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

8.12. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.13. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.14. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Դավիթն Օծոփեցի» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 2
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ՝ 02702022
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000	Հ/Հ՝ 163048229716
Ա.Սարգսյան	**Շ.Գրիգորյան**
Գործադիր տնօրենի ժ/պ	*Տնօրեն*